

# ՍՏԱԼԻՆ

891.99
Ձ-39

19 NOV 2011

ՀԱՅԿԱԿԱՆ
ԽՍՀ
ՊԵՏՀՐԱՏ

19 NOV 2011



891.99 աշ
Զ-39

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

# ՍՏԱԼԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

12.04.2013
29479

НАИРИ ЗАРЯН

# С Т А Л И Н

Армгиз Ереван

…Библиотека
…-СОРА
им. А. Мясникяна
4
40



Աքիլլեսին Հոմերն յերգեց, Ռուստամ Զալին՝ Ֆիրդուսին,
Բոնապարտի անունը գոռ՝ հազար գուսան յերգեցին,
Հազար կայծակ մըռընչացին մըրրիկներում արնաներկ,
Ու շողացին գիշերներում հազար ասուպ, հազար յերգ։



Բայց տառապած մարդու համար չէր ճառագել մի արև,
Մարքսի նըման ճանաչափայլ, Էնգելսի պես հանճարեղ,
Լենինի պես բոցակորով, Լենինի պես լուսահորդ,
Յեվ քեզ նըման հըստակ ու մեծ, ո՛վ պողպատե Առաջնորդ:





Չի՛ խավարի ծիրանավառ հորիզոնում պատմության
Ձեր հանճարի արեգնային չորրորդությունը տիտան։
Կըծավալվի նա անսահման, հավերժաբար կա՛րևի,
Ցեվ կպատռի մըշուշն անցյալ և ապագա դարերի։



Հազար Հոմեր ու Ֆիրդուսի կառնեն գըրիչ և քընար,
Ու յերգելով չեն ըսպառի Ձեր մեծությունն անհնար։
Կերգեն բոլոր լեզուներով բանաստեղծներ նորանոր,
Կըտան դարերը Ձեզ վայել հուշարձաններ փառավոր։



Իսկ յես, զինվորըդ խանդավառ, հայ լենինյան բանաստեղծ,
Բերում եմ քեզ ժողովրդիս յերախտապարտ սիրտը մեծ:
Յերգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենքին,
Դու ազգերի յերջանկության ճարտարապետ ու դարբին:



Կանգնած եր նա, իմ ժողովուրդը, մութ վիհի յեզերքին՝
Իր հանճարի հազարամյա մարգարիտները ձեռքին,
Կանգնած եր նա անդունդի մոտ, անօգնական ու հյուծված,
Արյունակից և այլազգի վոսոխներից հալածված,
Մահվան մըթին մըրրիկների ամենակուլ բերանում՝
Նա, հոշոտված բազուկներով, մի յելք եր նոր՝ վորոնում:



Ազատարար Հոկտեմբերի քայլերն այնժամ թընդացին,
Հընչեց քո ձայնը լենինյան, Լենինի հետ միասին.
Դուք ոգնության լույս նետեցիք ժողովըրդին իմ չոքած,
Դուրս կոչեցիք մահվան վիհից դեպի կյանքի դուռը բաց:
Նա վեր կացավ գոտեպնդված, վոստնեց թափով ահագին
Ու միացավ կոմմունիզմի աշխարհայերթ բանակին:





Մեռավ Լենինն ու պատմությունը մի վայրկյան կարկամեց,
Ու շողացիր հորիզոնում դու արևի նըման մեծ,
Նախորդների հզոր լույսով և քո լույսով սեփական
Տանում ես դու յերկիրն ահա դեպի պայծառ ապագան:



Անունըդ խոր յերգի նըման մարդկանց հոգին վողողում,
Թևեր տալիս ու հիասքանչ հերոսության է մըղում:
Յեվ իմ չըքնաղ Հայաստանի ծաղկածիծաղ լեռներում
Իր նոր աշխարհն է կառուցում քեզնով լեցուն մի սերունդ:



Гос. Публ. Библиотека
ЗСФСР-ССРА
им. А. Мясникяна

Յեվ յես, նըրա ծոցից յելած մի խանդավառ բանաստեղծ,
Բերում եմ քեզ իմ յերջանիկ ժողովրդի սերը մեծ:
Յերգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենքին,
Դու մարդկային յերջանկության ճարտարապետ ու դարբին:





ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна

Նկարազարդումը և տեխ. խմբագրու-
թյունը նկարիչ՝ ՍՏ. ԱԼԹՈՒՆՅԱՆԻ
Լիտոգրաֆիայի նկարիչ՝ ԱՆ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Սրբագրիչ՝ ԱՐ. ԱՐՋԱՔԱՆՅԱՆ

Գլավլիտի լիազոր՝ Ն 1173 Հրատ. № 505։
Պատվեր 769. Տիրաժ 5000. Թուղթ 62×94.
Տպագր. 1,5 մամ. Մեկ մամ. 38400 նշան.
Հանձնված է արտադրության 1 հոկտեմ-
բերի 1939 թ. Ստորագրված է տպա-
գրության—13 նոյեմբերի 1939 թ.

Պետհրատի I տպ. Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0330924

29479